Հ. Ռ. ԹՈՓՈՒԶՅԱՆ, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 359 էջ։

Դարեր շարունակ Եգիպտոսի հայ գաղութը հանդիսացել է հայ գաղթաշխարհի ամենախոշոր ու ամենանշանակալից գաղութներից մեկը։ Սակայն մինչև օրս հրապարակի վրա չկար այդ գաղութի պատմությանը նվիրված մի հատուկ հետազոտություն, որն ամբողջական պատկերացում տար գաղութի մասին։ Հ. Թոփուզյանի սույն աշխատությունը լրացնելով այդ բացը, հանրագումարի է բերում Եգիպտահայ գաղութի վերաբերյալ նախորդ հետազոտությունների արդյունքները։ Օգտագործելով հայ պարբերական մամուլի բազմաթիվ օրգաններ, արխիվային փաստաթղթեր, նոր հայտնաբերված վավերագրեր, հայերեն և օտար լեզուներով հարուստ գրականություն, հեղինակը ոչ միայն հանգամանորեն շարադրում է իր ուսումնասիրած գաղութի պատմությունը, այլև վերանայում ու ճշտում է բազմաթիվ փաստեր։ Միաժամանակ նա աշխատում է հատուկ կանգ առնել այն հարցերի վրա, որոնց քննությունը ամբողջապես կամ մասամբ դուրս էր մնացել նախորդ ուսումնասիրողների տեսադաշտից։

Գրքի շահեկան կողմերից մեկն այն է, որ հեղինակը Եգիպտոսի հայ գաղութի պատմությունը շարադրում է այդ երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային պատմության լայն ֆոնի վրա, որը նրան հնարավորություն է տալիս խորամուխ լինելու այս կամ այն երևույթի ներքին դրդապատճառների ու շարժիչ ուժերի մեջ։ Մյուս կարևոր հանգամանքը, որ աչքի է ընկնում այս ուսումնասիրության մեջ, դա հարցերի ընդգրկման լայնությունն է ու խորությունը։

Ժամանակագրական առումով աշխատությունն ընդգրկում է Եգիպտահայ գաղութի բազմադարյան պատմության խիստ ուշագրավ մի հատվածը՝ XIX դ. սկզբներից, այսինքն՝ Եգիպտոսի նոր պատմության սկզբնավորումից մինչև 1952 թ. եգիպտական հեղափոխությունը՝ շուրջ 150 տարիների պատմություն։ Հեղինակն առաջնորդվելով պատմության պարբերացման մարքսիստական մեթոդոլոգիայով, հիշյալ ժամանակահատվածը բաժանել է երեք էտապի՝ 1805—1882, 1882—1917 և 1917—1952 թթ., որոնք սոցիալ-տնտեսական կյանքի հեղաբեկման, նոր իրավաքաղաքական հարաբերությունների սաղմնավորման ու զարգացման տեսակետից միանգամայն ուրույն փուլեր են ինչպես Եգիպտոսի, այնպես էլ Եգիպտահայ գաղութի պատմության մեջ։

Սակայն ընթերցողի կողմից այդ գաղութի ամբողջական պատմության մասին համապարփակ գաղափար կազմելու համար հեղինակը համառոտակի անդրադառնում է նաև նրա պատմությանը սկսած II—III դդ., երբ հայերի առանձին հատվածներ հանդիպանում էին Եգիպտոսում, հիմք դնելով գաղութի բազմադարյան պատմությանը։

Գրքի առաջին բաժնում քայլ առ քայլ ցույց են տրվում այն պատճառները, որոնց հետևանքով Եգիպտահայ գաղութը ոչ միայն ստվարացավ թվական առումով, այլև զգալիորեն բարձրացավ նրա տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի մակարդակը։ Այդ պատճառներից ամենակարևորը իրավացիորեն համարվում է հայ զանգվածների այն հոսքը դեպի Եգիպտոս, որը հետևանք էր Արևմտյան Հայաստանում և առհասարակ բովանդակ Օսմանյան կայսրության մեջ հայ ժողովրդի ծանր վիճակի։ Մյուս կողմից, XIX դ. առաջին կեսին Եգիպտահայ գաղութի զարգացման հիմնական կովանն է գիտվում հայ առևտրավարկային կապիտալը, որի հետքերով էին մեծ մասամբ Եգիպտոս արտագաղթում հայ զանգվածները։ Հեղինակին հաջողվել է նրբին կերպով վերլուծել Եգիպտահայ գաղութի ներքին կյանքի մեջ տեղի ունեցած այն տեղաշարժերը, որոնք նկատվում էին գաղութի վերելքի հետևանքով։ Մասնավորապես ցույց է տրվում, որ հայ առևտրականների և վարկատուների դասը, այլևս չբավարարվելով լոկ ֆինանսական-տնտեսական գործունեությամբ, մղվում էր դեպի պետական-քաղաքական գործունեության ասպարեզ, բարձր պաշտոններ զբաղեցնելով Եգիպտոսի տիրակալ Մոհամմեդ Ալիի կառավարության մեջ և ակտիվորեն ներգործելով երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության վրա։

Հատուկ կանգ առնելով Եգիպտոսի ինքնուրույնության համար մղված պայքարին Եգիպտահայերի մասնակցության հարցի վրա, հեղինակը հանգամանորեն ցույց է տալիս, որ XIX դ. սկզբներից հայերն ակտիվ մասնակցություն են ունեցել ինչպես օսմանյան տիրապե-

տության դեմ եգիպտական ժողովրդի ազատագրական պայքարին, այնպես էլ Եգիպտոսին Եվրոպական տերությունների կողմից պարտադրվող կապիտուլյացիաների ցանցից հնոու պահելու գոտեմարտին։ Միաժամանակ իրավացիորեն նշվում է, որ օտարերկրյա կապիտալի դեմ անհավասար պայքարը ավարտվում է եգիպտահայ առևտրավարկային կապիտալի պարտությամբ, որի հետևանքով նրա ներկայացուցիչները դառնում են եվրոպական ձեռնարկությունների և եգիպտական շուկայի միջև միջնորդ-կոմպրադորներ։ Եգիպտահայ բուրժուազիայի տնտեսական դիրքի մեջ տեղի ունեցած այս փոփոխությունն անմիջապես իր անդրադարձերն է ունենում նաև նրա քաղաքական վիճակի մեջ։ XIX դ. երկրորդ կեսից սկսած հայ առևտրական բուրժուազիայի քաղաքական կողմնորոշման մեջ առաջանում են որոշակի տեղաշարժեր այն առումով, որ նա այսուհետև հանդես է գալիս եվրոպացիների հետ տնտեսական ու քաղաքական սերտ համագործակցության օգտին։ Այս կապակցությամբ հեղինակը հերքում է եվրոպական պատմագիտության մեջ տարածված և նույնիսկ սովետական պատմագիտություն մուտք գործած այն անհիմն տեսակետը, թե իբր հայազգի դիվանագետ, Եգիպտոսի պրեմիեր-մինիստր Նուբար փաշա Նուբարյանը Անգլիայի գործակալն էր։ Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ նշում է, որ Եվրոպական կապիտալի հետ համագործակցելու նրա վարած քաղաքականությունը բխում էր օսմանյան կապիտուլյացիաներից ազատագրվել ձգտող եգիպտական բուրժուազիայի շահերից, միաժամանակ նկատելով, որ Եգիպտոսում բրիտանական տիրապետության հաստատումից հետո այդ քաղաքականությունը այլևս չէր կարող ծառայել Եգիպտոսի ինքնուրույնության պայքարին։

Կանգ առնելով եգիպտահայ աշխատավորների վիճակի վրա, Հ. Թոփուզյանը ցույց է տալիս, որ եգիպտահայ գաղութի սոցիալ-դասակարգային կազմը երբեք միատարր չի եղել, ինչպես պնդում են հայ ազգային-պահպանողական աշխարհայացքի տեր որոշ պատմաբաններ։ Գաղութում եղել են և՛ շահագործողներ, և՛ շահագործվողներ. ընդ որում «դասակարգային շահերի բարձր գիտակցությամբ տոգորված աշխատավորական առաջավոր խավերի բացակայության պայմաններում դասակարգային պայքարն էլ դրսևորվում էր թույլ կամ զարտուղի ձևերով» (էջ 69)։

Գրքի երկրորդ բաժնում անդրադառնալով գաղութի պատմությանը 1882—1917 թթ., հեղինակը ցույց է տալիս, որ նշված շրջանում եգիպտահայ գաղութը ստվարանում է նախ մասնակի, ապա զանգվածային գաղթականներ ընդունելով Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից։ Այս բաժնում, ի թիվս եգիպտահայ գաղութի տնտեսական ու քաղաքական վիճակի, հասարակական հարաբերությունների, մշակութային կյանքի և այլն, հատուկ քննվում է հայկական հարցում եգիպտահայերի խաղացած դերը։ Հանգամանորեն նկարագրելով այն շարժումը, որ ծավալվել էր Եգիպտոսում Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործման օգտին, հեղինակը ցույց է տալիս, որ այս հարցում ևս հայ սոցիալական տարբեր խմբերն ու դասակարգերն ունեցել են միանգամայն տարբեր դիրքորոշում։ Եթե կղերապաշտական վերնախավը հետևում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի գծին, որը թուրքական կառավարությունից էր սպասում արևմտահայության վիճակի բարելավումը, իսկ լիբերալ-բուրժուական շրջանները, արտահայտելով եվրոպական կապիտալի հետ կապված գաղութահայ առևտրական բուրժուազիայի շահերը, հայ ժողովրդի «թշվառության մեղմացումը» սպասում էին Եվրոպայից, հատկապես Անգլիայից, ապա ժողովրդի հայրենասիրական տրամադրություններ ունեցող խավերը, ոգեշնչվելով Մ. Նալբանդյանի, Հ. Սրվանձյանի և ազգային-դեմոկրատական հոսանքի մյուս ներկայացուցիչների գաղափարներով, պայքարում էին սուլթանական բռնակալության դեմ և Ռուսաստանից էին ակնկալում հայ ժողովրդի ազատությունը։

Բացահայտելով հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Եգիպտոսում՝ կապված հայկական հարցի հետ, գրախոսվող մենագրության հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ այդ կուսակցությունները պատրանքներ սնուցելով թուրքական բուրժուազիայի կողմից պրոպագանդվող ազատության և արդարության սկզբունքների նկատմամբ, հարց չէին դնում Հայաստանի անկախության վերաբերյալ, բավարարվելով լոկ ներքին ինքնավարության պահանջով։

Մենագրության մեջ հատուկ քննվում է նաև եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը և հայերը պրոբլեմը։ Այստեղ զարգացվող կարևորագույն թեզն այն է, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը կարևոր դեր է խաղացել արաբների ազգային զարթոնքի մեջ, որ Եգիպտոսը գաղութացրած բրիտանական իմպերիալիզմի և տեղական բուրժուազիայի դեմ հայ և արաբ աշխատավորները մղել են համատեղ պայքար։

Գրքի երրորդ բաժինը, որը վերնագրված է «Եգիպտահայ գաղութը 1917—1952 թթ.», նվիրված է գաղութի նորագույն շրջանի պատմությանը։ Այս շրջանը բնորոշվում է եգիպտական ժողովրդի ազգային անկախության պայքարի վերելքով։ Հեղինակը բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, որ ի վիճակի չլինելով դիմագրավելու եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքին, անգլիացիներն աշխատում էին կիրառել իրենց վաղեմի «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը, աշխատելով սեպ խրել հայ և եգիպտական ժողովուրդների միջև։ Մյուս կողմից, առաջնորդվելով իր նեղ դասակարգային շահերով, եգիպտական բուրժուազիան սկսում է պայքար մղել այսպես կոչված «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչների դեմ, դրանով իսկ նպաստելով համաեգիպտական մասշտաբով հակամպերիալիստական պայքարի թուլացմանը։ Սակայն ի հակադրություն բուրժուազիայի, եգիպտական առաջավոր մտավորականությունը կոչ էր անում ամրապնդել գարեր ի վեր երկու բարեկամ ազգերի միջև գոյություն ունեցող եղբայրական ջերմ զգացումները։

Այս բաժնում հեղինակը մանրակրկիտ քննում է եգիպտահայ գաղութում հայ հասարակական-քաղաքական տարբեր ճակատների և կուսակցությունների քաղաքականությունը, նրանց գործելակերպը, նպատակները և այլն։ Հ. Թոփուզյանն այդ կապակցությամբ միանգամայն իրավացիորեն նշում է, որ տարբեր ճակատների սահմանազատման հիմքերի հիմքը նրանց դիրքորոշումն էր Սովետական Հայաստանի հանդեպ։ Հարցի մեկնաբանման այս ելակետը հեղինակին հնարավորություն է ավել բացահայտելու դաշնակցական կուսակցության քաղաքական նեղմտությունը և կարճատեսությունը, որը մերժելով Սովետական Հայաստանի՝ որպես հայկական պետության գոյությունը, սկսեց փայփայել էքստերիտորիալ «անհայրենիք պետությանն» ցնորքը և փորձեց սփյուռքի հայությանը կտրել Սովետական Հայաստանից ու հակադրել նրան։

Գրքում հանգամանորեն շարադրվում է նաև եգիպտահայ գաղութի դեմոկրատական կազմակերպությունների՝ «Հայաստանի օգնության կոմիտեի», «Եգիպտահայ ազգային խորհրդի» և այլ կազմակերպությունների գործունեությունը, լուսաբանվում է այն դերը, որ խաղացել են եգիպտահայ գաղութի առաջադիմական շրջանները Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Սովետական Հայաստանին նյութական օգնություն ցույց տալու գործում։ Խորամուխ լինելով այդ օգնության դրդապատճառների մեջ, Հ. Թոփուզյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ եգիպտահայերը Սովետական Միության հաղթանակի մեջ տեսնում էին հայ պետականության գոյատևման և արևմտահայության հարցի լուծման երաշխիքը։

Աշխատության վերջում տրվում է եգիպտահայ պարբերական մամուլի մի ծավալուն ցուցակ, որն ընդգրկում է 1865—1952 թթ.։ Այն հիանալի ուղեցույց է ոչ միայն եգիպտահայ գաղութի պատմությունն ուսումնասիրողների, այլև բուն Եգիպտոսի պատմությամբ զբաղվող գիտնականների համար։

Մեր կարծիքով, որպես այս աշխատության թերություն, կարելի է նշել այն, որ հեղինակը համեմատաբար թուլակամ ձևով է կանգ առնում XIX դ. 80-ական թվականներին եգիպտական ժողովրդի հակաանգլիական ազգային-ազատագրական շարժման և նրանում հայերի մասնակցության հարցի վրա։ Չափազանց հակիրճ են քննված նաև երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում գաղութում տեղի ունեցած դեպքերն ու տեղաշարժերը։

Հ. Թոփուզյանի աշխատության մեջ սկզբից մինչև վերջ կարմիր թելի պես անցնում է այն ճշմարտացի ու կարևոր թեզը, որ եգիպտահայ գաղութը իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատևել է այն սերտ կապերի շնորհիվ, որ պահպանել է մայր ժողովրդի հետ։ Առանց այդ հոգևոր կապի սփյուռքի ցանկացած գաղութ անմիջապես կխամրի ու կանէանա։ Միայն իրական շոշափելի հայրենիքը և նրանում ապրող ժողովուրդը կարող է նեցուկ հանդիսանալ համայն աշխարհով մեկ ցրված հայության պահպանմանը, նրան ներարկելով ազգային դիմագիծն ու ոգին պահպանելու և շարունակելու ավյուն։

ՎԱՀԱՆ ԲԱՅՐՈՒՐԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր